



## Հեռուսուցման համակարգի շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական պահանջներ

### Օպերացիոն համակարգ



Հեռավար ուսուցման հարթակն աշխատում է Windows, Macintosh և Unix օպերացիոն համակարգերով: iOS և Android օպերացիոն համակարգով աշխատող սարքերի համար այս հարթակը հասանելի է ստորև նշված բոլոր դիտարկիչներով (browser): Սակայն տեսականֆերանսները հասանելի են Puffin դիտարկիչի միջոցով: Puffin դիտարկիչը կարող եք ներբեռնել Apple Store-ից և Play Market-ից:

### Կապի արագությունը



Ցանկալի կապի արագությունը 4 Mb/s է: Չնայած նախընտրելի է հնարավորինս արագ կապը, սակայն կապի ցածր արագության դեպքում ևս դասախոսներն ու ուսանողները հնարավորություն կունենան տեսնելու բոլոր նյութերը:

### Դիտարկիչ (browser)



Հեռավար հարթակի աշխատանքը թեստավորված է հետևյալ դիտարկիչներով՝

- ✓ Google Chrome 49.0 և բարձր
- ✓ Firefox 52.0 և բարձր
- ✓ Safari 5.0 և բարձր
- ✓ Puffin Web Browser

### Անհրաժեշտ ծրագրային փաթեթներ



Համակարգչում անհրաժեշտ է ունենալ հետևյալ ծրագրային փաթեթները և ծրագրերը՝

✓ Adobe Flash Player (նախատեսված համապատասխան դիտարկիչի համար)	<a href="https://www.network.am/More/AdobeFlashPlayer">https://www.network.am/More/AdobeFlashPlayer</a>
✓ Adobe Reader	<a href="https://www.network.am/More/AdobeReader">https://www.network.am/More/AdobeReader</a>
✓ Microsoft Office կամ OpenOffice	<a href="https://www.network.am/More/OpenOffice">https://www.network.am/More/OpenOffice</a>
✓ VLC Media Player	<a href="https://www.network.am/More/VLCMediaPlayer">https://www.network.am/More/VLCMediaPlayer</a>
✓ Java	<a href="https://www.java.com">https://www.java.com</a>

## Հավելյալ տեխնիկական միջոցներ



Խոսափող

Վեբ տեսախցիկ (web camera)

## Հայերեն տառատեսակի ապահովում



### Հայերեն տառատեսակով աշխատելու համար՝

*Windows XP, Vista, 7, 8, 8.1, 10* օպերացիոն համակարգերում կարող եք ներբեռնել

<https://www.network.am/More/KDWin/> ծրագիրը,

*iOS* համակարգում (*iPad-ի* և *iPhone-ի* համար) կարող եք ներբեռնել

<https://itunes.apple.com/us/app/haytar/id918936310?mt=8> ծրագիրը,

**Android** օպերացիոն համակարգում կարող եք օգտվել ներկառուցված հայերեն ստեղծաշարից, իսկ եթե այն բացակայում է, ներբեռնել [Gboard](#) հավելվածը և ավելացնել հայերենը՝ որպես մուտքագրման լեզու:

**MacOS** օպերացիոն համակարգում կարող եք ներբեռնել <http://www.nayiri.com/docs?l=en&n=0&s=1> ծրագիրը:

## Տեսահաղորդակցություն (Webinar)



Տեսահաղորդակցությունն անհրաժեշտ է դասախոսի և ուսանողների առցանց հաղորդակցման համար: Դասախոսն ակտիվացնում է տեսահաղորդակցության համակարգը, որին ուսանողները միանում են իրենց դիտարկիչների միջոցով:

Տեսահաղորդակցությանը միանալու համար ուսանողները պետք է իրենց համակարգիչներում ունենան համապատասխան դիտարկիչի համար նախատեսված Adobe Flash Player ծրագրային փաթեթը: Տեսահաղորդակցությանը մասնակցելու համար ցանկալի է օգտագործել անհատական կամ դյուրակիր համակարգիչ, որին կցված կլինեն վեբ տեսախցիկ և խոսափող:

## Ձայնագրություն

Դասընթացում ձայնագրված ֆայլի ձևով առաջադրանք ուղարկելու անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել ձայնագրության համար նախատեսված հետևյալ համակարգչային անվճար ծրագրերից.

### ***Windows օպերացիոն համակարգի համար՝***

ներբեռնել և տեղադրել [Audacity for Windows](#) ծրագիրը, ապա, արձանագրելով ձայնային ֆայլը, ընտրել ֆայլի mp3 ձևաչափը:

### ***Linux օպերացիոն համակարգի համար՝***

ներբեռնել և տեղադրել [Audacity for Linux](#) ծրագիրը:

### ***MacOS օպերացիոն համակարգի համար՝***

սեղմել հետևյալ հղման վրա՝ <https://www.audacityteam.org/download/mac/>

Օգտվելով տեղադրման հրահանգներից՝ տեղադրել ծրագիրը:

Տեղեկացնենք, որ այս տարբերակից օգտվելու դեպքում ծրագիրը պատրաստում է երկու ֆայլ: Երկուսն էլ պետք է ուղարկել դասախոսին: